**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/6**

ք.Երևան «26» «12» 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կամո Ամիրխանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գլոբալ Պրոեկտ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Լիդիա Զատիկյանին, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 03.05.2022թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/6 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 21.12.2023թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն և լրացումներ, ՀՀ կառավարության 2022թ.-ի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 2264-Ն որոշումը՝ Կատարողի կողմից կատարված ծառայությունների դիմաց վճարումները կատարելու նպատակով, կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.2 Սույն համաձայնագրով նախատեսված վճարումները կիրականացվեն հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ սույն համաձայնագրի կնքման օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 28.12.2023թ.:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/6 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված է 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «Գլոբալ Պրոեկտ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Ք. Երևան, Արգիշտի 7/6, 184 տարածք |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011039790 | Հ/Հ 1570026884380100 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 02664733 |
| ՔԿ ծառայության գլխավոր քարտուղարի Պ/Կ<br>Կ. Ամիրխանյան | Տնօրեն<br>Լ. Զատիկյան |
| (ստորագրություն)<br>Կ.Տ. | /ստորագրություն/<br>Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«26» «12» 2023 թ. կնքված N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/6 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 1 | 98111140/13 | ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերում օդափոխության, համատեղված ջեռուցման հետ և օդորակման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | - | - | - | 1475000 | 1475000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039790
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Գլոբալ Պրոեկտ» ՍՊԸ
Ք. Երևան, Արգիշտի 7/6, 184 տարածք
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570026884380100
ՀՎՀՀ 02664733

Տնօրեն
Լ. Զաքարյան
(ստորագրություն)